ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«08» մարտի 2025 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ՄԱՐՏԻ 8-Ի ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի կանայք

Սրտանց շնորհավորում եմ բոլորիդ կանանց միջազգային օրվա՝ մարտի 8-ի առթիվ:

Մաղթում եմ գարնանաբույր եւ լուսառատ օրեր՝ պսակված անձնական եւ աշխատանքային հաջողություններով:

Գարնանամուտի այս տոնի խորհուրդը, բացի բարության, նվիրվածության ու հոգատարության մարմնացումից, ընդգծում է նաեւ հայ կնոջ ակտիվ դերակատարումը հասարակական կյանքում: Սա և երկրի, և մասնավորապես մեր համայնքի զարգացման գրավականն է:

Սիրելի կանայք, մեծ է ձեր դերը մեր պետության համար արժանի քաղաքացիներ կրթելու, նրանց ազգային վեհ ու ազնիվ արժեքներով, հայրենասիրական ոգով դաստիարակելու դժվարին ու կարևոր գործում:

Այսօր մենք գլուխ ենք խոնարհում մեր համայնքի որդեկորույս մայրերի, արիացած կանանց առաջ, ում որդիներն ու ամուսիններն իրենց կյանքը զոհեցին հանուն հայրենիքի: Ձեր անսպառ լավատեսությամբ, բարությամբ ու անհատնում համբերությամբ, առաքինությամբ, դժվարություններին դիմակայելու անբացատրելի կարողությամբ, ընտանիքին ձեր անմնացորդ նվիրումով դուք, սիրելի կանայք, ամբողջացնում եք հայ կնոջ կերպարը, պահպանում մեր ազգային լավագույն ավանդույթները, հայոց ընտանիքի ամրությունը, ինչի համար արժանի եք ամենաբարձր գնահատանքի:

Կրկին շնորհավորելով այս գեղեցիկ օրվա առթիվ՝ մաղթում եմ ձեզ գարնանային թարմություն, սեր ու երջանկություն, խաղաղություն ու բարեկեցիկ կյանք, եղեք համբերատար, հավատով լեցուն եւ հավատարիմ ձեր առաքելությանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ